ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/26» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 28 » օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 17-րդ օրվա (26.08.2024թ.)՝ ժամը 12:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 27.08.2024թ.՝ ժամը 12:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գինը մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնման գինը մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	անվտանգության ապահովման սարքեր	101010000

3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Simsom	India
«Ֆասթ Սքան» ՍՊԸ	ք. Երևան, Կարմիր Բլուր փող. տ.71
«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	ք. Երևան, Հր. Ներսիսյան փ.ՓԿՂ./Շ/1/103 տարածք
«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 16, բն.53
SOFAEXPORT	Լոռու մարզ

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից, հիմնավորումներ ներկայացնելու մասին

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/26» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքների մասին

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/26» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքներն են.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Simsom	101010000	501010000	0 %	501010000	7400000	0 %	7400000	
1	«Ֆասթ Սքան» ՍՊԸ	101010000	84000000	20 %	100800000	75000000	20 %	90000000	
1	«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	101010000	84000000	20 %	100800000	76000000	20 %	91200000	
1	«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ	101010000	101010000	20 %	121212000	77000000	20 %	92400000	
1	SOFAEXPORT	101010000	10000000000	20 %	12000000000	10000000000	20 %	12000000000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 27.08.2024թ.՝ ժամը 12:30-ին և Simsom-ը Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4. դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/26» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման) մասին

Simsom-ի կողմից ներկայացված հայտում առկա է դիմում-հայտարարությունը (Հավելված 1), Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Simsom-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են (կցված չեն) իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի ձևը (Հավելված N 1.3), հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի (Հավելված 2) կամ կանխիկի փողի ձևով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ մերժված հայտերի ու ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել Simsom-ի հայտը:

8.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- մյուս մասնակիցների՝ «Ֆասթ Սքան» ՍՊԸ-ի, «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի և «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտերը մերժել:

8.3 SOFAEXPORT-ի՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի վերջինիս կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նորայր Աղամալյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարեն Կարապետյան

Քարտուղար՝ _____ Սիդա Հովհաննիսյան